

ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿԱՐՔ

Ասոմային Էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում
Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների
տեղեկատվական ռեսուրսների ծևավորման և փոխանակման և
տեղեկատվական համակարգերի ստեղծման և զարգացման
համագործակցության մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, ի դեմք իրենց կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

դեկավարվելով 1992 թվականի հունիսի 26-ի՝ Ասոմային Էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրով, Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մասնակից պետությունների կառավարությունների դեկավարների խորհրդի՝ 1997 թվականի հունվարի 17-ի՝ Ասոմային Էներգիայի խաղաղ օգտագործման, միջուկային տեղակայանքների անվտանգության բարձրացման ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության զարգացման հեռանկարային պլանի մասին որոշմանք, 1996 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության տեղեկատվական միջավայրի ծևավորման հայեցակարգով,

1999 թվականի դեկտեմբերի 24-ի՝ Տեղեկատվական ռեսուրսների և համակարգերի ձևավորման, ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվացման բնագավառում միջավայրի ծրագրերի իրականացման մասին համաձայնագրով,

արտահայտելով ձգտում՝ ստեղծել տեղեկատվական ռեսուրսներ և համակարգեր իրավահավասար և փոխչափավոր հիմքի վրա,

ենելով ատոմային Էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում միասնական տվյալների բառարանների ու դասակարգիչների օգտագործմանք հեռահաղողակցման համակարգերի, ժամանակակից տեխնիկական և ծրագրային միջոցների հիման վրա տեղեկատվական ռեսուրսների ինտեգրացիայի անհրաժեշտությունից,

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող հասկացությունները նշանակում են հետևյալը.

տեղեկատվություն - անձանց, առարկաների, փաստերի, իրադարձությունների, երևոյթների ու գործնքացների վերաբերյալ տեղեկություններ՝ անկախ դրանց գրանցման ու ներկայացման ձևից,

փաստաթղթակորպած տեղեկատվություն (փաստաթուղթ) - նյութական կրիչի վրա ամրագրված տեղեկատվություն՝ վավերապայմաններով, որոնք թույլ են տալիս դրանք նույնականացնելու,

տեղեկատվական համակարգ - փաստաթղթերի և տեղեկատվական տեխնոլոգիաների կանոնակարգված ամրողություն, այդ թվում՝ տեղեկատվական գործնքացների իրականացնող հաշվողական տեխնիկայի և կապի միջոցների օգտագործմանք,

իրավասու մարմին - գործադիր իշխանության մարմին, որը նշանակվում է Կողմի կողմից՝ տեղեկատվության միջաւետական փոխանակման համար օգտագործվող տվյալների ազգային բանկերի ստեղծման աշխատանքների համակարգման համար և օժուված է Կողմի անունից որոշումներ կայացնելու համապատասխան լիազորություններով,

Մեղեկատվական հարաբերությունների իրավական ռեժիմ - նորմատիվներով սահմանված կանոններ, որոնք սահմանում են քափանցիկության աստիճանը, փաստաթրավորման, տեղեկատվության հասանելիության, պահպանման, տարածման և պաշտպանության կարգը:

Հոդված 2

Սույն Համաձայնագիրը կարգավորում է Կողմերի միջև հարաբերությունները համագործակցության տեղեկատվական ապահովման բնագավառում սույն Համաձայնագրի անքաղաքացի մաս հանդիսացող Հավելվածում ներկայացված հիմնական ուրություններով:

Հոդված 3

Կողմերը տեղեկատվացման բնագավառում իրականացնում են համագործակցություն իրավահավասարության և փոխահավետության սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսական և աշխարհագրական առանձնահատկություններն ու շահերը, պահպանելով Կողմերի օրենսդրություններն ու միջազգային պարտավորությունները, իրականացնում են տեղեկատվական ռեսուրսների և համակարգերի ձևավորման և զարգացման համատեղ միջոցառումներ:

Հոդված 4

Կողմերն ապահովում են ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառ համատեղ օգտագործման համար նախանշված ազգային տեղեկատվական ռեսուրսների փոխադարձ հասանելիություն, պահում են դրանք արդիական վիճակում և ապահովում են տեղեկատվական տվյալների և ծառայությունների տրամադրման ամբողջականությունը, ծառությունը, հավաստիությունը, խելամիտ ժամկետներում հասանելի լինելը:

Սույն Համաձայնագիրը չի տարածվում պետական գաղտնիք հանդիսացող և այլ բաղտնի բնույթի տեղեկություններ պարունակող տեղեկատվական ռեսուրսների օգտագործման և փոխանակման վրա:

Կողմերից մեկի սեփականություն հանդիսացող տեղեկատվական ռեսուրսների օգործումը մյուս Կողմերի կողմից իրականացվում է միայն նրա գրավոր բույլտվում:

Յանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ համրամատչելիից, նյութերը, պային և տեխնիկական միջոցները, որոնք մի Կողմը ձեռք է բերել մյուս Կողմից, չեն վոխանցվել երրորդ Կողմի՝ առանց այն Կողմի նախմական գրավոր համաձայն, որից դրանք ձեռք են բերվել:

Հոդված 5

Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է ինչպես երկկողմ, այնպես էլ կողմ մակարդակներով, Անկախ Պետությունների Համագործակցության կողմից անքների կատարման համար ընդունված աշխատանքային լեզվով, պահպանե-

լով հաղորդագրությունների և փաթեթների բաց համակարգերի փոխանցման միջազգային չափանիշներով ասհմանված միջոցները՝ հետագայում սուբյեկտ օգտագործողին թրային կրիչի վրա նշված անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմամբ:

Հոդված 6

Կողմերն իրականացնում են համագործակցություն առողջապահության համար օգտագործման բնագավառում տեղեկատվական արդյունավետ և որակյալ ապահովմանը նպաստող համատեղ միջոցառումների մշակման և իրականացման համար պայմանների ստեղծման համար:

Համագործակցությունը սույն Համաձայնագրի շրջանակներում ապահովում է իրավասու մարմինների կողմից և հանդիսանում է կոնկրետ ուղղություններով առանձին համաձայնագրերի (պայմանագրերի) առարկա:

Կողմերը, սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ավանդապահին տեղեկացնում են իրենց իրավասու մարմինների մասին:

Հոդված 7

Համատեղ միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է Կողմերի գործող օրենսդրություններին համապատասխան՝ հաշվի առնելով նրանց ֆինանսական հնարավորություններն ու շահերը, ինչպես նաև նման միջոցառումների իրականացման ֆինանսատնտեսական և այլ հետևանքները:

Կողմերը, իրենց օրենսդրություններին համապատասխան, ներգրավում են ներդրումներ և համատեղ միջոցառումների մշակման և իրականացման համար կիրառում են խթանման մեխանիզմներ:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի իրագործման համար տեղեկատվական հարաբերությունների իրավական ռեժիմի մշակումը կատարվում է Կողմերի օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 9

Տեղեկատվական ռետորներին և համակարգերին վերաբերող իրենց օրենսդրություններում կատարվող փոփոխությունների նախն Կողմերը տեղեկացնում են միմյանց փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում և անցկացնում են համապատասխան բանակցություններ փոխադարձաբար ընդունելի որոշումների հասնելու համար:

Հոդված 10

Սույն Համաձայնագրու չի առնչվում Կողմերի այլ միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորություններին, որոնց մասնակիցներն են նրանք հանդիսանում:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնարանման և կիրառման ընթացքում Կողմերի միջև առաջացած վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 12

Սույն Համաձայնագրում բոլոր Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով և համարվում են դրա անբաժանելի մասը՝ ուժի մեջ մտնելով սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ստորագրող Կողմերի երրորդ գրավոր ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Այն Կողմերի համար, որոնք ծանուցագրերը հանձնել են սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո, Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի համապատասխան ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով, որի ավարտից հետո նրա գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է ևս հինգ տարով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակներն ու սկզբունքներն ընդունող՝ ինչպես ԱՊՀ մասնակից մյուս պետությունների, այնպես էլ երրորդ պետությունների միանալու համար՝ Համաձայնագրին միանալու վերաբերյալ փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու միջոցով:

Միացող պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու վերաբերյալ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո՝ պայմանով, որ այդ ընթացքում սույն Համաձայնագրի Կողմերից ոչ ոք այդ ժամանակ առնչությամբ առարկություն չի հայտնի:

Հոդված 16

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ ավանդապահին ուղարկելով գրավոր ծանուցագիր Համաձայնագրից դուրս գալու նմբառյալ ժամանակում ոչ ուշ, քան մեկ տարի առաջ, կատարելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ առաջացած ֆինանսական և այլ պարտավորությունները:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամանակ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն ընդունված պարտավորություններից յուրաքանչյուրի համար մնում են ուժի մեջ, քանի դեռ Կողմերը չեն պայմանական այլ բանի մասին:

Հոդված է Մոսկվա քաղաքում 2007 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ուստի նույնական պահպանակով: Բնօրինակը պահպան է ԱՊՀ Գործադիր կոմիտեում, որը դրա վավերատվածները կուղարկի սույն Համաձայնագրին ստորագրած յուրաքանչյուր

**Ապումային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառության
Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների
դեղեկարգական ռեսուրսների չնավորման և փոխանակման և
դեղեկարգական համակարգերի սրեղծման և զարգացման
համագործակցության մասին Համաշայնագրին կից**

ՑԱՆԿ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝
ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում տեղեկատվական
ռեսուրսների ձևավորման և փոխանակման և տեղեկատվական համակարգերի
ստեղծման և զարգացման համագործակցության հիմնական ուղղությունների

1. Տեղեկատվական համակարգերի ստեղծման տեխնիկական և տեխնոլոգիական
լուծումների և մերողաբանական հիմքերի մշակում:

2. ԱՊՀ մասնակից պետությունների ներկայացուցչությունների կայքերի ստեղծում:

3. ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվական համակարգերի տեղեկա-
տվական անվտանգության ապահովման միջոցների և համակարգերի մշակում, ներ-
դրում և սպասարկում:

4. Մասնակցություն դեպի ԱՊՀ մասնակից պետությունների ազգային շուկաներ
ծառայությունների և ապրանքների առաջնորդման համար տեղեկատվամարկետինգային
կենտրոնների ցանցի ստեղծմանը՝ մինչև 2005 թ. ընկած ժամանակահատվածում, ասո-
մային տեխնոլոգիաների բնագավառում հաղորդակցության ուղիների տեղեկատվա-
տեխնոլոգիական միջավայրի զարգացման ճանապարհով:

5. Տեխնիկական փաստաթղթերի և գիտատեխնիկական տեղեկատվության, ինչ-
պես նաև նորմատիվային փաստաթղթերի փոխչափական տեղեկատվական փոխանակման բնագավառում համագործակցության զարգացում:

6. Տեղեկատվական ռեսուրսների, ծառայությունների, տեղեկատվական համա-
կարգերի և դրանց ապահովման տեխնոլոգիաների ու միջոցների շուկայի ձևավորում:

7. Ասումային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում տեղեկատվական
ռեսուրսների և համակարգերի ստեղծում և օգտագործում:

8. Ասումային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում գործընթացների և
օբյեկտների բնութագրերի միատեսակ նկարագրի ապահովում՝ հիմնված տեղեկատվա-
կան ռեսուրսների ձևավորման միավորների միջազգային համակարգի վրա:

9. Համացանցի օգտագործում՝ շարտոնված նույտերից համապատասխան պաշտ-
պանությամբ, որպես տեղեկատվության փոխանակման հիմնական միջավայր, հաղոր-
դագրությունների էլեկտրոնային փոխանակման համակարգերի ձևավորում՝ հիմնվելով
միջազգային շափանիշների վրա:

10. Տեղեկատվական ռեսուրսների դասակարգման, կողավորման, ստանդարտաց-
ման և սերտիֆիկացման ընդհանուր միջավայրի համակարգի ստեղծում:

11. Համատեղ օգտագործման տեղեկատվական ռեսուրսների ստեղծում:

12. Միջավետական տեղեկատվական փոխանակման կատարելագործում՝ կապված արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման և բնակչության ու տարածքների պաշտպանության ապահովման հարցերի հետ:

13. Տեխնիկական փոխագործունեության իրականացում՝ համագործակցության աջակցման երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման և զարգացման ուղղությամբ:

14. Աջակցություն ԱՊՀ մասնակից պետությունների տեղեկատվական ռեսուրսների միջազգային կենտրոնի կազմակերպմանը:

15. Տեխնոլոգիաների և տեխնիկական ու ծրագրային միջոցների որակի համակարգերի ստանդարտացում և սերտիֆիկացում:

16. Միջուկային գիտության և տեխնիկայի բնագավառում միջազգային տեղեկատվական համակարգերի (ԱՏՄՀ) տվյալների բազային և ծառայություններին առցանց միացման կազմակերպում, համակարգի զարգացում, որպես տարածաշրջանային՝ ԱՊՀ մասնակից պետությունների համար:

17. Միջավետական էլեկտրոնային գրադարանի ստեղծում և նրա գործունեության ապահովում: ԱՊՀ մասնակից պետությունների գրադարանային կոնսորցիոնի ձևավորում:

18. Հասարակայնության հետ աշխատանքներում փիար տեխնոլոգիաների օգտագործում:

19. Համատեղ գովազդային գործունեություն:

20. Տեղեկատվավերլուծական և պարբերական հրատարակությունների համատեղ հրատարակում:

21. Հեռուստատեսային ծրագրերի, գիտահանրամատչելի և փաստավերագրական ֆիլմերի համատեղ ստեղծում:

22. ԱՊՀ մասնակից պետությունների ուսումնական կենտրոնների և ինստիտուտների հիմքի վրա օգտագործողների և մշակողների ուսուցման համակարգի ստեղծում:

23. Աջակցություն նոր տեղեկատվական տեխնոլոգիաների յուրացման վրա աշխատող համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

24. Ծգմաժամային իրավիճակներում կառավարման բնագավառի գիտամեթոդական նյութերի փոխանակում:

**Համաշայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել
2013թ. սեպտեմբերի 18-ին**